Արշակ Չոպանյան

Բարեկենդան

Եկո՛ւր ծպտինք, սիրելի՛ս,
Փոխենք օրվան մը համար,
Երազի մը մեջ հիմար,
Դուն սիրտդ ու ես իմ հոգիս:

Ես չար ըլլամ, դուն բարի.
Դուն հեգնությունդ ծածկես,
Ու ես սրբեմ աչքերես
Արցունքներու ցողն աղի:

Պահ մ'էակն այն չըլլաս ցուրտ,
Որ գիս ա՜յնքան կ'չարչարե,
Ու հոգվույդ մեջ մարմարե
Իր դողն անուշ թափե գութ:

Եվ յուրացնեմ ես պեսպես
Քմահաճույքներն այլանդակ,
Որոնց ցանցով դրժընդակ
Ջիս ամեն օր կտանջես:

Օ՛ր մը, գեթ օ՜ր մ', հասկցա՞ր,
Կ'ուզեմ փոխենք դերերնիս,
Դուն զոհն ըլլաս, սիրելի՛ս,

Ես դահիճը սիրտով քար։